

Խոդաւոր մանգանեսի . . . . .	Մանգանէս	344,7
	Լոդ	1578,2
		1922,9

Ուրեմն 344,7 լիւը էրնակ ճանգանեսի զուգաշախն սեպել :

Իսէ բաղկացեալ մարմնոց զուգաշախն լիւն է էրենց բաղկացու տարերաց զուգաշախնուց գումարը . զոր օրինակ նախաթթուիկ ջրածնին կամ ջրին զուգաշախն է 112,5 թիւր : Այս կերպով եթէ քննելու ըլլանք ամէն պարզ մարմին՝ կը տեսնենք որ իրենց բաղկացութեանց մէջ մի և նոյն օրինաց կը հետեւին , այսինքն ան օրինաց զորն որ աս տարուան բնալուծական դասերնուս առջի հատուածին մէջ ըսինք , որ է “Պարզմարմինները որ և իցեւ չափով իրարու հետ չեն միանար , հապա բնութեան մէկ անշարժ ու անփոփոխ օրինօք մը , որով երկու պարզ մարմնոց բաղկացութեան չափը ամենաձիշդ կերպով սահմանուած է „ , և այլն : Ենանկ որ ինչուան հիմա աս նիւթիս վրայ խօսածնէս ու փորձերնէս կրնանք բնալուծութեան աս ընդհանուր օրէնքն ալ ’ի միտ առնուլ , որ է . Ամէն գէտ պարզ մարմնոց համար մէյմէկ էլլուակն չափ հայ , և պարզ մարմնոց իրարու հետ բաղկացութեանները աս որոշեալ չափերով համ անոնց պարզ բաղկացառադին է ԱՄԵՄԱԿԱՆ ԹՈՒ և ԲՆԱԼՈՒԾԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԱՓՔ ըսածները , որոնց ցուցակը զրինք անուանակոչութեան Բ. յօդուածին մէջ :

1 Տես Դաս Ժ . էջ 27 :

2 Տես Դաս ԺԱ . էջ 59 :

Հ . Օ . ԳՈՒՐԳ .

## ԶՈՒՄԱԾԱԼԻՔ

### Մանիկ ու թունիկ :

Օր մը Մանիկ կէսօրուան դէմ  
Խընտում դարձաւ պարտիզէն .  
“ նայէ , մայրիկ , նայէ սըւոր . . .  
Ո՛հ . ի՞նչ միրուն , ի՞նչ աղուոր ,  
Կանչեց , ու ձեռքը ձագ մը ողք  
Ցըցուց իր մօրն ու քըրոջ :  
Ուրախութիւնն ալ իրենն էր .  
Կը գուրգուրար կը շոյէր .  
Մէյմը բազկիկ կուրծքին բոներ  
Ու զինքը մէջ կը գուրէր .  
Մէկ կը ծըռէր հինդ կը պագնէր  
Ըրթունք գլւսէն չէր զատեր .  
Եւ կամ բըռնած թաթիկներէն  
Կը խաղցնէր ինքիրմէն .  
Ու կը բանար թէկը մեղմով  
Երկու սղասի մատիկով .  
“ Աննիկ , ըսաւ , քիչ մը ամուր  
Խընդրէմ ինծի դէրձան տուր . . .  
Ու թեթէիկ մը թըռչնեկին  
Առաւ կապեց զայն ստքին .  
Խնք դէրձանին բըռնած ծայրէն  
Թողուց թըռչունը ձեռքէն .

Եւ ուր որ այն կը թուցտէր  
Խընտում ետին կը հասնէր :  
Քիչ մը տաեն այսպէս խաղաց  
Վազվըզէլէն ալ յոգնած .  
Թողուց թըռչունն որ ելլէջ  
Թուջն ցատքէ խըցին մէջ .  
“ Այս գերձանով ուր ալ երթայ  
Գուրիկ , ըսաւ , վախ շիկայ ,  
Անդին սեռուկ կատուն պառկեր  
Կամացուկ մը կը գիտէր ,  
Ու անկիւն մը պահուցանըզ  
Հոն կը սպասէր տպահով :  
Խեղչ թուցունն որ ինքցնք ազատ  
Տեսաւ խըցին մէջ հանդարտ ,  
Փախչելու Ճար մը կը փնտուէր .  
Ասդիս անդին կը կըտէր .  
Մէյմը շիտակ կ'երթար դըրան  
Ու երթեմն ալ պատուհան .  
Բայց անօգուտ տեղ յոգնելուն  
Իշաւ երկու քայլ հեռուն ,  
Ուր որ կատուն էր ծածկուած  
Կատարանին ետևանց :  
Մէյ մ'ալ գազանն յանկարծ ցատքեց  
Ու խեղչ թըռչունը Ճանկեց .

Հազիւ ճըւաց՝ ի՞նչ կը տեսնես ,  
Կատուն պատռեց մէջքէն կէս :  
ԱՌՅ այ արուաց անդին Մանիկ  
Հասաւ , կու լար զիւր հաւիկ .  
Ու չէր գիտեր բարկութենէն  
Ինչ վլէժ առնու գաղանէն .  
Ուքը վըղին վըրան կոխած  
Աւելի կոթ ձեռքն առած  
Խեղչը ծեծի տակ մեռցնել  
Կարծես թէ միաքն էր դըրել:  
Բայց կատուին սուր մըռլաւելէն  
Մայրը վաղեց վեր վարէն .  
“ Ատ ի՞նչ , կանչեց , ի՞նչ , ի՞նչ կ'ընես ,  
Մանիկ , խեղչին ինչ կ'ուզես . —  
Դարձաւ Մանիկ ու պատմելուն  
Կու լար նորէն զիւր թըրչուն . —  
ՈՌ , մայրիկ , թող , թող կ'աղաշեմ  
Թող որ վրեժը առնեմ : —  
Ան առեն մայրը գըգուելով  
Որդին պատաւ ժըպակելով .  
“ Ինչո՞ւ կատուին գէմ դու ասանկ  
Կը բարկանաս , ով որդեակ .  
Թէ որ քեզի գէմ վընասեց՝  
Ըրածիդ փոխարինեց :  
ՈՌ , ինչ սրառվ , ըսէ Մանիկ ,  
Բոյնէն առիր զայդ թըրչնիկ .  
Ի՞նչքեզի գէմ չարկե ըրեր  
Են այդ խեղչին ծընողքներ .  
Դու թէ որ զինք կորսցնցուցիր  
Ու առշափ արցունք թափեցիր .  
Հապա խեղչին հայրն ու մայրիկ  
Ի՞նչ չեն ըլլար ով Մանիկ :  
Բայց ասիկայ խըրատ ըլլայ  
Գեղու լաւ միտքը ալ մընայ ,  
Ու ուրիշն արւած վըշտաց  
Փոխարինը կու տայ Աստուած .  
Ինչ որ այսօր դու թշնամույդ  
Վաղն ալ Աստուած կու տայ գըլսոյդ ” :

## Առանձ ագոհ հէ :

Օստէրպաւդ անունով գաղղիացի սեղանաւորը  
կը մեռնի Փարիզ քաղցին մէջ 1790ին Դէկտեմբեր  
ամսուն , սասակի կարօտութեան վիճակի մէջ :  
Այս մարդը նէշամել ծնած էր և ադահու .  
թէան ախտէն անանկ բռնուած էր , որուն քով  
ժանտախտը ինչ պիտի ըլլայ . և իրաւցնէ որ ասի .  
կայ անանկ զզուելի ախտ մըն է , որ աւելի հոգ .  
ոյ հիւանդութիւն կ'ըսուի . քան թէ մտաց կիրք :  
Մահուան անկողինը պառկած ատենն ալ խելքը  
միտքը չարսնակ սասակներուն վըայ էր , անանկ  
միրտը կապուած էր սասակին հետ , որ հոգին ա .  
մէնկին չէր մտածեր : Մեռնելէն քանի մը որ ա .

աւաջ աղքականները քովը եկան աղաչեցին որ քա .  
նի մը գրամայ՝ որ գոնէ քիչ մը միտ գնեն ու ի .  
րեն ապուր մը եփին : Նգահը դարձաւ . “ Իրաւ  
որ ապուրը լաւ բան է , ըստ , ես ալ շատ կը սի .  
րեմ . բայց միու ի՞նչ պիտի ըլլայ . ես առողջու .  
թեանս ատեն միտ չէի ուտեր , հիմա պիտի ուտեմ”  
որ ախորդակ ալ չունիմ . դացէք , դացէք , ապու .  
րը բաւական է : Եղկելին չէր գիտեր որ ապուրը  
մին ջրովկ'եփին . ինքը ստակէ չելլալու համար  
գոհ էր պարզ ջրով ապուրի : Եւ կըսեն թէ հե .  
ւանդութեան ատեն ձեռքը ունեցած ստակները  
քսակի մը մէջ լեցուցած վլէն կախած էր , որուն  
մէջ 1,000 լիրայ ստոկ կար : Անանկ թէթէ կ'ապ .  
րէր որ կարծես թէ ճգնաւորներուն ամենէն իրս .  
տակրօնն էր , սովորեցուցած էր իրեն ամէն որ ստոկ  
դաւաթ մը գարեջուր իսմել . իրիկուտն ընթրեքի  
տեղ :

Ամէն գիտէր կ'երթար մէկու մը տունը , ու ան  
անէն երբար գառնալը ըլլար . ձեռքը որչափ որ  
սնէկ շիշի խցաններ կ'անցնէր . գրպանը կը դնէր  
ու տուն կը բերէր : Ութը տարուան մէջ այլչափ  
բան ժողվեց աս խցաններէն , որ օր մը 12 լուի  
սոկոյ ծախելով . ան ստակն ալ գլուխի դրաւ : Ա .  
զէկ ալ գիտէր իր ստակներուն շատցնելու կերպը :  
Երբոր մեռաւ աս մարդս խզմալի կարտութեան  
մէջ , քովէն 3 միլիոն լիրայ ստակ ելաւ :

Օսգերլիսալու ան ստակներովը թշուառացաւ  
պահելով . բայց կարծեմ որ իրեն ժառանգներն  
ալ ան ստակներով թշուառացան շրայելով . վասն  
զի տուած է՝ թէ Նգահութեամբ ժողոված ստա .  
կը շրայլութեամբ կը կորսուի :

## Յանդիսութիւն ծուլէու :

Տնօրն բրուտին մէկը որ մը Լանկթամուրին որդ .  
ւոյն պալսար կ'երթայ , ու գիմացն որ կ'ելէ կ'ըսէ  
իրեն . Տէրիմ , հրամանքդ կը հաւատմա Մահմէտա .  
ան օրէնքին , որ կը սորվեցնէ թէ ամէն մահմէտա .  
կան իրարու եղբայր են : — Խնանը կը հաւատմա .  
կ'ըսէ : — Աւրիմ , Տէրիմ , կը կրկնէ բրուտը , եր .  
բոր այսպէս իրարու եղբայր ենք , անիրաւութիւն  
չէ մի որ հրամանքդ այսչափ մեծութիւն , այսչափ  
գանձ ունենաս , ու ես օրուան հային կարա ըւ .  
լամ . կ'աղաչեմ . ինչ որ ինձի իրրե եղբայր մաս  
կ'իյնայ տաս : — Խնանը առանց շփոթելու բրու .  
տին այս յանդուգն պահանջմունքին վրայ , պա .  
տասխան կու տայ . իրաւունք ունիս , եղբայր .  
ու բովին գու այդպէս օրինապահ ես , ահա քեզի  
աւելօքը կը հասուցանեմ . ու մէկէն կը հանէ բրու .  
տին ձեռքը կը գնէ տասը փարանոց մը , երթասրա .  
րով ըսելով : Բրուտը զարմացած այս բանիս վրայ .  
կ'ըսէ իշխանին . էյ . աս ի՞նչպէս բան է . այդչափ  
ունեցած էգ ամ մի ընկաւ իմ մաս : Ան ատեն կը  
գառնայ իշխանը . Զայն չհանած շուտգնա . կ'ըսէ .  
որ մէր մէկալ եղբայրներն ալ շիմանան , վասն զի  
թէ որ ամէնքն ալլան ու գան ինծմէ իրենց մասը  
ուղենան . քեզի այսչափն ալ չիյնար :